

# ԴԱՐՁՅԱԼ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ...

*Posted on June 9, 2021 by Keghart*



Category: [Opinions](#)



## **Կարո Հակոբյան, Շվեդիա, 7 Հունիս 2021**

Հայաստանի Հանրապետության համար արտաքին թշնամու վտանգը այսօր վտանգավոր չափերի է հասել: Հայաստանին բարեկամ կամ դաշնակից պետություններից հստակ, առարկայական ու աներկբա աջակցություն և երաշխավորության ազդանշաններ չեն նշմարվում:

Իհարկե միշտ, բայց հատկապես այս պարագային, մեր անվտանգության միակ վստահելի երաշխավորը պիտի լինենք մենք՝ հայերս, մեր բանակով, մեր ներկա ամբողջ ներքին ու արտաքին *հնարավորություններով*: Մենք ինքներս պիտի գծենք մեր ապագայի և ազգային անվտանգության ուղղությունը և ընթացքը: Անկախության հենց առաջին օրվանից սա պիտի լիներ մեր ուղեգիծը, բայց մենք անկախ հանրապետություն ստեղծելով՝ նրա ճակատագիրը մեծավմասամբ կապեցինք օտարի հետ, կամ հանձնեցինք օտարների պատասխանատվությանը, մսխեցինք պետական աղբյուրները (*ռեսուրսները*) և այսօր ունենք այն ինչ ունենք:

Շատ է խոսվել ու խոսվում միասնականության մասին, բայց այդ միասնականությունը միշտ չէ, որ ստացվել և ստացվում է: Երևի պատճառներից մեկը այն է, որ չենք բացատրում այդ միասնականության ինչպիսի լինելը, եղությունը... Միասնական լինել ինչի՞ մեջ, ի՞նչ հիմունքների վրա կառուցված:

Բարձրագույն՝ վերացական խոսքերով և ազգային վերամբարձ ու մշուշոտ գաղափարներով միասնականության քարոզները բավական չեն, և մեզ տեղ չեն հասցնելու: Հարցը խորքային է, սակայն այնուամենայնիվ ունի հստակ եւ բոլորի համար հասկանալի պատասխան:

### **Անվերապահորեն միասնական պիտի լինել առաջին հերթին արտաքին թշնամիներից պաշտպանվելու համար:**

Բոլոր քաղաքական և հասարակական ուժերը այստեղ պիտի լինեն միաձայն: Դրա փորձը մենք պատմության մեջ ունեցել ենք: Լավագույն օրինակներից մեկը Սարդարապատի հաղթանակած հերոսամարտն էր, ուր բոլորը անխտիր մեկ մարդու պես դուրս եկան անարգ թշնամու դեմ: Հաջորդը Արցախյան ազատագրման առաջին պատերազմն էր, իսկ վերջինը, զարմանալի թող չթվա, մեր ժողովրդի (ոչ թե քաղաքական ուժերի) միասնությունն էր՝ ընդդեմ այսպես կոչված 17-ի շարժմանը, որի հեղինակների նպատակը ըստ եղանակի իրենց անձնական նեղ շահերի և փառասիրությունների համար պետականության հիմքերը քանդելու գնով՝ իշխանությունը զավթելն էր: Եվ նրանց չհաջողվեց միայն ու միայն մեր ժողովրդի միասնականության ու իմաստնության շնորհիվ, որ չգնաց նրանց ետեւից... և ինչու չէ, նաեւ իշխանությունների խոհեմության շնորհիվ, որոնք չտրվեցին սադրանքների:

Իսկ ի՞նչ պատահեց 44-օրյա պատերազմի ընթացքում:

Մի կողմից հայ ժողովուրդը ամբողջ աշխարհով մեկ, մի մարդու պես, ուղի կանգնեց պաշտպանելու իր իրավունքը և պետականությունը, մյուս կողմից, բանակում ծառայող մեր 18-20 տարեկան հերոս երիտասարդների ու սպաների կողքին տեսանք հին ռեժիմը ներկայացնող ուժերի պառակտիչ ու դավադիր գործունեությունը, որոնք երկրի ռազմաքաղաքական ղեկավարության կողքին կանգնելու և թուրք-ադրբեջանական-ջիհադիստական ուժերի դեմ միասին պայքարելու փոխարեն, բացահայտորեն որդեգրեցին **պատեհապաշտական քաղաքականություն**՝ օրինավոր իշխանություններին տապալելու և ամեն գնով նորից իշխանության հասնելու համար:

Դրան իհարկե օգնում էր անկազմակերպվածությունը, թերացումները, պետական ապարատի և բանակի մեջ համատարած սաբոտաժը: Մի խոսքով օդի մեջ սավառնում էր դասալքության եւ դավադրության թունավոր ոգին: Իսկ վերոնշյալ ուժերը ազգի ու բանակի կողքին կանգնելու փոխարեն, հրապարակայնորեն, անթաքույց հայտարարում էին, որ **գեներալները իրենց գեները ուղղեն դեպի Երեւան...**

Պատերազմում պարտության կծիկը այստեղից է բացվում, և ցավոք դեռ շարունակվում է:

2018-ի հեղափոխությունը եկավ դրանց պատմության աղբանոց նետելու, սակայն ներքին ու արտաքին բազմաթիվ բացահայտ ու ոչ բացահայտ պատճառների բերումով պատերազմը չորեք մեր դռանը և **հների** համար, նույնիսկ մեր պարտության գնով, դարձավ ամենահարմար առիթ՝ վերականգնելու իրենց իշխանությունը:

**Եվ այսօր արտահերթ ընտրությունների այս շեմին** արտաքին թշնամու դեմ միասնական ճակատ կազմելու փոխարեն, հակահեղափոխական ուժերը հին ու նոր նախագահների գլխավորությամբ, մեր սահմանները պաշտպանելու ի խնդիր, ոչ միայն **ՄԱՏԸ ՄԱՏԻՆ ՉԵՆ ԽՓՈՒՄ**, այլ արտաքին թշնամու հետ միեւնույն ճակատում ձգտում են ամեն գնով հասնելու իշխանության:

Առանց իմանալու դավաճանության իմաստն ու բնույթը, ո՛վ քնից արթնանում մյուսին անվերապահ հայտարարում է դավաճան: Իսկ դավաճանը նա է, ով այս վտանգավոր պահին արտաքին թշնամու դեմ դուրս չի գալիս՝ գեթ սովորական մի հայտարարությամբ... **Պարզ ասած լկտիության չափը անցած Ալիևին չի հայտարարում, որ մենք կարող ենք ունենալ ներքին խնդիրներ, բայց քո դեմ մենք միասնական ենք և ջարդելու ենք մեր երկիրը ներխուժող յուրաքանչյուր թշնամու ողնաշարը:**

Այս պարագային ժողովրդին մնում է հսկայական մեծամասնությամբ վերջին անգամ **մերժել** ազգը թալանած բոլոր **կեղծ ազգային** կոչված հին ու նոր հակահեղափոխական ուժերին և ազատ ընտրությամբ պաշտպանել իրենց իսկ իշխանությունը և կանգնել հեղափոխության ու հեղափոխությանը աջակցող ուժերի կողքին:

Իսկ ժողովրդավարությանը և ինքնիշխան պետականությանը հավատարիմ ուժերին

մտնւմ է համարվել և ընտրություններում թույլ չտալ որ «**կեղծարարության մեջ գրոսմայստերներ**» համարվող հակահեղափոխական ուժերը իրենց հնարաւորութիւններով կեղծեն ընտրություններն ու այդպիսով ժողովրդից խլեն իրենց ազատ կամքի արտահայտությունը:

**There are no comments yet.**